ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/29

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.03.2018թ. թիվ 03/26-3/5015-18 գրությամբ «Թորդադ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00084709) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.03.2018թ. թիվ ՎՀ/1610-18 գրության հիման վրա, 20.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Թորդադ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 19.03.2018թ. թիվ ՎՀ/1610-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Թորդադ» ՍՊԸ-ն, ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գնումների կազմկերպման բաժնի պետ Հրաչյա Մանուկյանը:

3. <u>«Թորդադ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Թորդադ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.08.2017թ. թիվ 03/27-1/14327-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ 28.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Թորդադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդում նախաձեռնված ՍՑ-ԷՍ-2018/29 պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական կադաստրի կողմից՝ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Թորդադ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ մրցույթ):

«ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 02.03.2018թ. ժամը 09:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Թորդադ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 10-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը հրավերի 7 հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2.1 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում էր ներկայացվել՝ «Թորդադ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ Կոմիտեից ստացված հարցման մասին տեղեկատվությամբ պարզվել է, որ տվյալ մասնակիցն ունի հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 1,735,745 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից և

կազմում է 1,715,780 ՀՀ դրամ, այնինչ «Թորդադ» ՍՊԸ-ն ներկայացրել է 8,870,904 ՀՀ դրամի գնային առաջարկ:

Հանձնաժողովի քարտուղարը կոմիտեից ստացված հարցման մասին տեղեկատվության ստացման օրը ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը չի շտկել անհամապատսախանությունը: Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Աբակ» ՍՊԸ-ին:

Այպիսով, գնահատող հանձնաժողովի կողմից «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է երկու հիմքով՝ 1,735,745 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու և հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա.խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 63-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Թորդադ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Թորդադ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 1,735,745 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն և հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից և կազմում է 1,715,780 ՀՀ դրամ:

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելո

փիրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. Հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Թորդադ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունները ստուգելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում է ներկայացվել: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ ասած, առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ընկերությունը չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ, համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Գտնում ենք, որ «Թորդադ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որև է պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Թորդադ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 1,735,745 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն և հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից և կազմում է 1,715,780 ՀՀ դրամ, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Ընկերության կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում ենք, որ «Թորդադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Անհրաժեշտ է նշել, որ նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր բազմաթիվ որոշումներով՝ մասնակցի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու կամ «Ֆինանսական միջոց» որակավորման չափանիշը գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար գնահատելու հիմքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննելիս:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Թորդադ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Սենորիկ Դադալյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/29 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.03.2018թ. թիվ 03/26-3/5015-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 19.03.2018թ. թիվ ՎՀ/1610-18 գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.03.2018թ. նիստի թիվ 2 և 15.03.2018թ. նիստի թիվ 2.1 արձանագրությունները, «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեի «Երևան» տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Թորդադ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

• N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

• N3 հավելվածով՝ որոկավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը 10.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 7,392,420 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), կամ 8,870,904 ՀՀ դրամ ԱԱՀ-ն ներառյալ:

Նույն արձանագրության 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Թորդադ» ՍՊԸ-ին, իսկ 10-րդ կետով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 13.03.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Թորդադ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 1,735,745 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն: Նույն եզրակացությամբ Կոմիտեն ներկայացրել է նաև տեղեկատվություն առ այն, որ Ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ընդամենը 1,715,780 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 15.03.2018թ. նիստի թիվ 2.1 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել «Թորդադ» ՍՊԸ-ին՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեից ստացված հարցման մասին տեղեկատվությամբ պարզվել է, որ տյալալ մասնակիցն ունի հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (1,735,745 ՀՀ դրամի չափով), ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է գնային առաջարկից և կազմել է 1,715,780 ՀՀ դրամ: Հանձնաժողովը ծանուցել է «Թորդադ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը:

Նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես

նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Երևան» տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հրավերի 1-ին մասի՝

• 2.5 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Մասնակցին ներկայացվող՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

• 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության

չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 8.19 կետի համաձայն՝ հրավերի 1-ին մասի 8.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

• 8.20 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Խորհուրդն արձանագրում է, որ «Թորդադ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, ինչպես նաև N 3 հավելվածով՝ որոկավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին՝ նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողություններն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ

կետով, Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, ինչպես նաև Հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2018թ. «Թորդադ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00084709) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Թորդադ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**